



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Универсал 26

У 6 р



1906

ԼԵՒ ՏԱԼՍՏՅՅ

14 JUL 2009
Dr. A. V. S. 296
411-1905

2-3818a



Ս Է Ր

1 տող
5-80

ԹԱՐԳՄ. ԷՄՄ. ՔԱՂ. ՆԱԶԱՐԵԱՆՑ.

ԼԵՒ ՏԱԼՍՏՅՅ.

Հիբրորաշարի տպարան Ե. Աւետիբեանի, Մոսկվա.

1906.

Armen.
H 2-3818a

1504503
S-80

Armen. 20085

ԼԵՒ ՏԱԼՍՈՅ

Ս Է Ր

I.

Սէրը քննութեան առարկա չպէտք է շինել, — ասուծ են սովորաբար այն մարդիկ, որոնք չգիտեն, ինչ է կեանքը, — այլ պէտք է անձնատուր լինել անմիջական նախապատուութեան ու հակման այն զգացումին, որ մարդ ունի զէպ ուրիշները. այդ է ահա իսկական սէրը:

Սյուզիսիներն ուղիղ են ասուծ, որ սէրը քննութեան առարկա չի կարելի շինել, որ, դառնալով քննութեան առարկա, նա դադարուծ է սէր լինելուց: Բայց բանը նրանուծն է, որ սէրը կարող են քննութեան առարկա չշինել միայն այն մարդիկ, որոնք իրանց խելքն արդէն գործ են դրել կեանքը հասկանալու վրա ու հրաժարիւն անձնական կեանքի բարիքներից ու վաղելքներից. իսկ նրանք, որոնք չեն հասկացել կեանքը և ապրուծ են անասնական անձնատուրութեան վաղելքների համար, չեն կարող չքննել: Նրանք անպատճառ պէտք է քննեն, որպէս զի անձ-

ԵԸԸԵ

ՀՈՅ. № 21333

նատուր լինեն այն զգացումին, որ իրանք սէր են անուանում: Ի՞նչպէս էլ արտայայտվելու լինի այս զգացումը, անկարելի է, որ նրանք չքննեն, թող չտան անթույլատրելի հարցեր:

Իրան, մարդ իր երեխան, իր բարեկամները, իր կինը, իր զաւակները, իր հայրենիքը աւելի է յարգում, քան ուրիշներին. ու այս զգացումը անուանում են սէր:

Սիրել՝ առհասարակ նշանակում է լաւութիւն տանել: Սչսպէս ենք հասկանում ամենքս սէրը և ուրիշ կերպ չենք կարող հասկանալ: Սչսպէս անա, ես սիրում եմ իմ երեխաս, կինս, հայրենիքս, այսինքր իմ երեխայի, կնոջ, հայրենիքի լաւութիւնն աւելի եմ ցանկանում, քան ուրիշներին: Երբէք այնպէս չէ՛ պատահում ու չի՛ կարող պատահել, որ միայն երեխաս, միայն կինս, միայն հայրենիքս սիրեմ: Մարդը հանրապէս միասին է սիրում երեխան է՛յ, կինն է՛յ, զաւակներն է՛յ, հայրենիքն է՛յ, մարդուն է՛յ: Բայց լաւութիւնների պայմանները, — որ նա, իր սիրուց, ցանկանում է անել զանազան սիրված էակների, — այնպէ՛ս են կապված միմեանց հետ, որ մարդու սիրային որ և է գործը, — որ անում է սիրված էակներից մէկի համար, — ոչ միայն խանգարում է միւսների վերաբերմամբ անելիքը, այլ և վնասում է նրանց:

Եւ անա՛ առաջ են զայիս այսպիսի հարցեր. ո՞ր սիրու համար ու ի՞նչպէս պէտք է գործել: Ո՞ր սի-

րու համար պէտք է զո՞ր բերել ուրիշի սէրը, ո՞րին աւելի պէտք է սիրել և ո՞ւմ պէտք է աւելի լաւութիւն անել՝ կնոջը, թէ՛ զաւակներին, կնոջն ու զաւակներին, թէ՛ բարեկամներին: Ի՞նչպէս ծառայենք սիրած հայրենիքներին, որ չխանգարենք կնոջ, զաւակների ու բարեկամների սէրը: Վերջապէս, ի՞նչպէս լուծենք այս հարցերը. ի՞նչ չափով ես պէտք է զո՞ր բերեմ իմ անմնաւորութիւնը՝ ուրիշներին ծառայելու, պէտք զայու համար: Ի՞նչքան պէտք է հող տանեմ իմ մասին, որ — սիրելով ուրիշներին, — կարողանամ պէտք զայ նրանց:

Սրանք շատ հասարակ հարցեր են թվում նրանց, ովքեր իրանց հաշիւ չէ՛ն ավել այն զգացումի վերաբերմամբ, որ իրանք սէր են անուանում. բայց դրանք ոչ թէ հասարակ, այլ բոլորովին անլուծելի հարցեր են: Սչս հարցերին պատասխանելը շատ հեշտ բան են համարում նրանք, ովքեր մոռացել են մարդկային կեանքի իսկական պայմանները:

Ուրիշ բան է, եթէ մարդիկ աստուածներ լինէին, միայն այն ժամանակ կարող էին սիրել միմիայն ընտրովի մարդկանց, միայն այն ժամանակ մի քանիսին՝ միւսների վերաբերմամբ տված նախապատուութիւնը կարող էր լինել իսկական սէր: Բայց մարդիկ աստուածներ չէ՛ն, այլ զոնվում են զոչութեան այն պայմաններում, որոնց մէջ բոլոր կենդանի էակները միշտ ապրում են միմեանցով, խժռելով իրար՝ այլ



39853-67

բառի թէ՛ իսկական ու թէ՛ փոխաբերական մարտի-
 և մարդը,—իրև բանական էակ,—պէտք է դիտենա
 ու տեսնի այս: Նա պէտք է դիտենա, որ մարմնական
 ամէն փայելը՝ մի էակ ստանում է միայն ի վնաս
 միւսի:

Անասնական կեանքի այն իրարանցման ու կռի
 մէջ, որոնք աշխարհի կեանքն են ներկայացնում, մարդը
 չի կարող սիրել ընտրովի մարդկանց, ինչպէս երեւ-
 կացում են կեանքը չհասկացող մարդիկ: Մարդ,—եթէ
 հէնց ընտրովի մարդիկ է սիրում,—երբէք այնպէս չէ՛
 պատահում, որ միմիայն մէկին սիրի: Ամէն մարդ մօրն
 էլ է սիրում, կնոջն էլ, երեխային էլ, բարեկամներին
 էլ, հայրենիքն էլ, մինչ անգամ ամենքին: Ու այս սէրը
 լոկ խօսք չէ՛ (ինչպէս ամենքն էլ համաձայն են) այլ
 գործ է, գործ, որի նպատակն է՝ լաւութիւն անել
 ուրիշներին: Իսկ այս գործը չէ՛ առաջ դպիս որոշ
 կարգով, այնպէս որ մարդուն առաջ ներկայանան նրա
 այն սիրու պահանջները, որ աւելի է գորեղ, յետո՞ պա-
 կաս գօրեղինը և այլն: Սիրու պահանջները շարունակ
 առաջ են դպիս բոլորը միասին, առանց որ և է կարդ
 ու կանոնի: Այս բոսկիս եկել է մի բազմաժ ժերունի,
 որին ևս քիչ ու միչ սիրում եմ, և խնդրում է այն
 ուսելիքը, որ պահել եմ՝ ընթրիքին իմ սիրած դա-
 ւակներիս տալու. ի՞նչպէս չափեմ ես ներկա փոքր
 սիրու և ապագա մեծ սիրու պահանջները:

Ի՞նչպէս վնուենք, ո՞ւմ պիտանի լինեմ ու ի՞նչ

չափով մարդկանց, թէ՛ հայրենիքիս. հայրենիքի՞ս, թէ՛
 բարեկամներիս, բարեկամների՞ս, թէ՛ կնոջս, կնոջս, թէ՛
 հօրս, հօրս, թէ՛ դաւակներիս կամ հէնց ինձ (որ, հար-
 կաւոր ժամանակ, կարողանամ ծառայել ուրիշներին):

Ախար սրանք բոլորն էլ սիրու պահանջներն են և
 բոլորն էլ այնպէս են կապկպված միմեանց հետ, որ,
 երբ պահանջներից մի քանիսին բաւարարութիւն եմ
 տալիս, միւսներին չեմ կարողանում տալ: Իսկ եթէ
 այնպէս մտածեմ, թէ՛ ցրտից սառած երեխային կա-
 րելի է հաղնելիք շտալ, միայն այն պատճառով, որ
 երբ և է իմ դաւակներին կհարկաւորվի ինձնից խնդրած
 հաղնելիքը, այդ դէպքում, ստիպված պէտք է լինեմ
 սիրու միւս պահանջներն էլ չկատարել, մտածելով, ո՞վ
 դիտէ, ապագայում ի՞նչքան դաւակներ եմ ունենալու:

Մի և նոյնը կարելի է ասել և՛ հայրենիքի, ընտ-
 րած պարսպաւորների ու բոլոր մարդկանց սիրու մա-
 սին: Եթէ մարդ կարողանա մերժել ներկայի ամենա-
 փոքր սիրու պահանջները՝ ապագայի ամենամեծ սիրու
 պատճառով, միթէ՛ հասկանալի չէ՞, որ այդպիսի մար-
 դը, — շատ էլ որ հոգով ցանկանա, — երբէք չի՛ կարող
 իրան հաշիւ տալ, թէ՛ ինքն ի՞նչ իրաւունք ունի մերժե-
 լու ներկայի պահանջները, ապագան նկատի ունենալով,
 ու այս պատճառով,—չկարողանալով այս հարցը լու-
 ծել,—միշտ կընարի սիրու այն արասպապաութիւնը,
 որ իրան դուր է դպիս, այսինքը կգործի ո՞չ թէ՛ սի-
 րելուց, այլ՝ ի՛ր անձի համար: Երբ մարդ վնուում է,

որ լաւ կանի, եթէ հեռու պահի իրան՝ ներկա ամենա-
 փոքր սիրու պահանջները կատարելուց, միւս մեծ
 սիրու պահանջները կատարելու համար, — այդ դէպ-
 քում, նա կամ իրան է խաբում, կամ ուրիշներին, և
 միայն իրան է սիրում, ուրիշ ոչ որի:

Սպազալի սէր չկա. սէրը միայն ներկայի՛ գործ է:
 Իսկ ով ներկայումս սէր չէ կարողանում արապայատել,
 նա սէր չունի:

Ուղիղ ան է դուրս գալիս, ինչ որ կարելի է
 մասձել կեանքը չհասկացող մարդու մասին: Եթէ
 մարդիկ անասուն լինէին, ու բանականութիւն չու-
 նենային, նրանց կեանքն էլ անասնական կլինէր, չէին
 քննի կեանքը, և իրանց անասնական գոյութիւնը
 օրինական ու բախտաւոր կլինէր: Մի և նոյնն էլ պէտք
 է ասել սիրու մասին: Եթէ մարդիկ անխելք կենդանի
 լինէին, ո՞ւմք սիրել են, էլի նրանց կսիրեն, այն է՝
 իրանց ձագերին ու իրանց հօտը, ու չէին զիտենա,
 որ սիրում են իրանց ձագերին ու իրանց հօտը, ոչ էլ
 անց կզիտենային, որ ուրիշ գալչէր սիրում են իրանց
 ձագերին, և ուրիշ հօտերը՝ իրանց հօտրնկերներին, ու
 նրանց սէրը կլինէր անց սէրն ու այն կեանքը, որ կա-
 րող էր գոյութիւն ունենայ զիտակցութեան անց աս-
 ախնանի վրա եղած ժամանակ, որի վրա գանվում են
 զրանցպէսները:

Բայց մարդիկ խելացի էակներ են, ու չեն կարող
 չտեսնել, որ հէնց նրանցպէս են սիրում իրանց ձա-

գուկներին, և որ, հեռեւապէս, սիրու այս զգացում-
 ները պէտք է ընդհարվեն ու արտադրեն ինչ որ ոչ
 թէ մի լաւ բան, այլ՝ սէրին բոլորովին հակառակ մի
 հասկացողութիւն:

Իսկ եթէ մարդիկ իրանց խելքը գործ են դնում
 արդարացնելու ու սասակացնելու անց անասնական
 կամ լաւ զգացումը, որ իրանք սէր են անուանում,
 հրէշաւոր լինելու չափ այն մեծացնելով, այդ դէպ-
 քում, այդ զգացումը ոչ միայն չէ լաւանում, այլ մար-
 դուն դարձնում է — վաղուց յայտնի ճշմարտութիւն
 է — ամենաչար ու սոսկալի կենդանի:

Ս: չն, ինչ որ կեանքը չհասկացողները սէր են ա-
 նուանում, իրանց անձնական բարօրութեան պայման-
 ներից միայն մի բանիսի որոշ նախապատուութիւնն է
 միւսների վերաբերմամբ: Երբ կեանքը չհասկացողն ա-
 սում է, թէ սիրում է իր կինը, երեխան կամ բարե-
 կամը, զրանով միայն անց է ուղում ասել, թէ իր
 կնոջ, երեխայի կամ բարեկամի ներկայութիւնը փա-
 ուստորում է իրան:

Այս նախապատուութիւններն այնպէս են վերա-
 բերում սէրին, ինչպէս գոյութիւնը՝ կեանքին: Ու
 ինչպէս, կեանքը չհասկացող մարդիկ կեանք են անու-
 անում գոյութիւն ունենալը, այնպէս էլ զրանք սէր
 են անուանում անձնական գոյութեան պայմաններից
 մի բանիսի՝ միւսների վերաբերմամբ ունեցած նախա-
 պատուութիւնը:

Այս զգացումներն էլ, — լայտնի էակների, ինչպէս, օրինակ, մարդու իր զաւակների կամ մինչ անգամ լայտնի պարսպումների, օր, զիտութեան, արուեստների վերաբերմամբ տված նախապատուութիւնը — նոյնպէս սէր ենք անուանում: Բայց նախապատուութեան այսպիսի անասելի բազմազան զգացումները բարդում են մարդկանց վայելած ու վայելելիք անասնական կեանքը, և չէն կարող սէր կոչվել, որովհետեւ նրանց մէջ չկան սիրու գլխաւոր նշանը՝ այն զործր, որի նպատակն ու հետեանքը լուութիւնն անեին է:

Այս նախապատուութիւններն արտաշայտող կիրքը՝ անասնական կեանքի էներգիան է միայն ցոյց տալիս: Մարդու մէկը միւսից զերազատելու կիրքը, — որ, սխալմամբ, սէր է կոչվում, — լուի մի վայրի ծառ է, որի վրա կարող է պատուաստուել իսկական սէրը և սաղ սիրու պտուղներ: Բայց, ինչպէս որ վայրի ծառը խնձորենի չէ՝ ու պտուղ չէ տալիս, կամ քաղցր պտղի փոխանակ, դառար պտուղ է տալիս, այնպէս էլ խանդատութիւնը սէր չէ՝ ու, մարդուն լուութիւն անելու փոխանակ, դեռ մեծ չարիք էլ է առաջացնում:

II.

Իսկական սէրը միայն այն ժամանակն է առաջ գալիս, երբ մարդ հրաժարվում է անասնական վայելքներից:

Այդպիսի սէրը միայն այն ժամանակն է սկսվում, երբ մարդ հասկանում է, որ իր անասնական անձնաւորութեան մէջ ոչինչ լաւ կողմ չկա: Միայն այն ժամանակ նրա կեանքի բոլոր հիւթերից ստացվում է իսկական սիրու ազնւացած մի եիւղ, որ արդէն աւնում է լայնքի ու երկայնքի մէջ, անասնական անձնաւորութեան վայրի ծառի բոլոր ուժերով:

Մարդիկ հրաժարվում են անձնաւորութիւնից՝ ոչ թէ հօրը, որդուն, կնոջը, բարեկամներին, բարի ու հանելի մարդկանց սիրելուց, ինչպէս սովորաբար կարծում են, այլ, զիտակցելով, որ անձնական զոյութիւնը ունայնութիւն է ու անօգուտ. մարդ հասկանում է իսկական սէրը և կարողանում է իսկութեամբ սիրել հօրը, որդուն, կնոջը, զաւակներին ու բարեկամներին: Սէրը՝ ուրիշ էակներն իրանից, իր անասնական անձնաւորութիւնից զերազատելն է:

Երբ անձնաւորութեան ամենամօտ շահերը մոռացվում են՝ մի և նոյն անձնաւորութեան հեռաւոր նպատակներին հասնելու համար, — ինչպէս պատահում է սէր կոչված այն սէրին, որ անձնաւորութեան վրա

չէ բուսած,—այդ միայն այն է նշանակում, որ մարդ, իր անձնական բարորութեան համար, մի բանի էականեր գերադասում է միւսներից: Իսկական, ճշմարիտ սէրը,—շինող զգացում դառնալուց առաջ, պէտք է լինի մի յայտնի դրութիւն, վիճակ: Սիրու սկիզբը, արձատր ոչ թէ բանականութիւնը մթնեցնող զգացումի թափն է, —ինչպէս սովորաբար երեւակայում են,—այլ այն ամենախելացի, պաշտօն, հետեւապէս և, խաղաղ վիճակը, որ յատուկ է մանուկներին ու խելացի չափահասներին:

Այս վիճակը՝ դէպ ամենքը բարեհաս լինելու վիճակն է, որ յատուկ է մանուկներին, բայց որ չափահասի մէջ առաջ է դալիս անձնութեան զէպրում և սաստկանում այն չափով, ինչ չափով մարդ հրաժարվում է իր անձնական բարիքներից ու վայելքներից: Ինչպէս շահախ է լուծ մարդ («խաար ինձ համար մի և նոյն է, ինձ ոչինչ հարկաւոր չէ») խօսքերը, ու, դրանց հետ միասին, անսէր վերաբերմունք է տեսնում դէպ բոլոր մարդիկ: Բայց թողէք, որ մարդ զոնէ մէկ անգամ փորձի, — դէպ ուրիշները այդպէս անբարեացակամ արամադրված ժամանակ,—ինքն իրան անկեղծ, սրտանց տեսլու. «Ինձ համար մի և նոյն է, ինձ ոչինչ հարկաւոր չէ», և զոնէ առժամանակ ոչինչ չցանկանա իր համար,—կտեսնէք, որ այս հասարակ ներքին փորձով իսկոյն հասկանում է, թէ ինչպէս, իր անձնական անկեղծութեան չափով, ջրվում է ամէն անբարեացակա-

մութիւն, և Ինչպէս, հեղեղի առատութեամբ, հասում է իր սրտից դէպ ամենքն ունեցած այն բարեացակամութիւնը, որ մինչ այդ փակված, պաշարված էր:

Իրան, սէրը՝ ուրիշ էակաները իրանից գերադասելն է—չէ որ ամենքս էլ այսպէս ենք հասկանում սէրը. ուրիշ կերպ չի էլ կարելի հասկանալ: Սիրու մեծութիւնը այն կոտորակի մեծութիւնն է, որի համարիչը՝ ուրիշների վերաբերմամբ արտապատած խանդս, համակրանքներս են, և իմ իշխանութեան տակ չէ, նրա մեծացնելն ու փոքրացնելը ինձնից չէ կախված. իսկ յայտարարը՝ դէպ անձս ունեցած սէրը, ինչքան ուղեւնամ, կարող եմ մեծացնել ու փոքրացնել, նայելով, թէ ինչ նշանակութիւն եմ տալիս իմ անասնական անձնաւորութեանը: Գալով այն կարծիքներին, որ մարդիկ յայտնում են սիրու և նրա սատիճանների մասին, դրանք այն կարծիքներն են, որ նրանք յայտնում են կոտորակների մասին, նայելով նրանց համարիչներին՝ առանց նկատի ունենալու յայտարարները:

Իսկական սիրու հիմքը միշտ անձնական վայելքներից հրաժարվելն է և նրանից առաջ եկող՝ դէպ ամենքն ունեցած բարեհասութիւնը: Միայն այս հանուր բարեհաս վերաբերմունքի վրա կարող է աճել իսկական սէրը՝ դէպ յայտնի մարդիկ, իրայինները կամ օտարները: Եւ միայն այսպիսի սէրն է սուղիս կեանքի իսկական վայելքը ու լուծում բանական ու անասնական զիտակցութեան թվացող հակասութիւնը:

Այն սէրը, որ չէ հիմնված անձնաւորութիւնից հրաժարվելու, հեռեւապէս և, զէսլ ամենքը բարեհաճ լինելու վրա, լոկ անասնական կեանք է ու ենթարկված է հէնց նոյն, ու աւելի էլ մեծ թշուառութիւնների ու աւելի մեծ թիւրիմացութեան, բան այն կեանքը, որ շունի այս կեղծ սէրը: Խանդոտութեան գագաթը, որ սէր է կոչվում, ոչ միայն չէ վերացնում գոյութեան կռիւր, չէ ազատում անձնաւորութիւնը զուարճութիւնների ետեից ընկնելուց ու մահից, այլ աւելի էլ մթնեցնում է կեանքը, կատաղեցնում կռիւր, սաստկացնում իր և ուրիշների զուարճութիւնների ազատութիւնը և մեծացնում իր և ուրիշների մահիւմ երկիւղը:

Այն մարդը, որ իր կեանքը անասնական անձնաւորութեան մէջ է տեսնում, չի կարող սիրել, որովհետեւ սէրը նրան պէտք է ներկայանա իրբե մի գործ, որ ուղղակի հակառակ է իր կեանքին: Այսպիսի մարդու համար կեանքը՝ միայն անասնապէս գոյութիւն ունենալն է, իսկ սէրը ամէնից առաջ այդպիսի կեանքը գոհելն է պահանջում: Եթէ կեանքը չհասկացող մարդը մինչ անգամ ուղի էլ անկեղծ անձնատուր լինել սիրու գործին, չի կարող, մինչև չհասկանա կեանքը և չփոխի նրա հետ ունեցած իր բոլոր յարաբերութիւնները: Այն մարդը, որ իր կեանքի նպատակը գտնում է անասնական անձնաւորութեան վայելքների մէջ, ինչքան շատ է սպրում, այնքան մեծացնում է իր անասնական

բարօրութեան միջոցները, մեռք բերելով ու դիզելով հարստութիւն, ստիպում է ուրիշներին՝ ծառայել իր անասնական վայելքներին, այդ վայելքներն էլ բաժանում է այնպիսիների միջև, որոնք աւելի են հարկաւորվել իր անձնական բարօրութեանը: Ի՞նչպէս տանա իր կեանքը, երբ այդ կեանքը ոչ թէ ինքն է պահպանում, այլ՝ ուրիշները: Ու աւելի էլ դժուարանում է նա ընտրութիւն անելու իր դերադասած մարդկանց միջև, թէ որին տա իր դիզած հարստութիւնը և ո՞ւմ ծառայի:

Իր կեանքը սալ կարողանալու համար, առաջ մարդ պէտք է տա այն աւելորդը, որ, — հանդիսա կեանք անց կացնելու նպատակով, — առել է ուրիշներից, ու չետո անի անկարելին, այն է՝ վճուի, թէ ո՞ւմը ծառայի: Սիրել կարողանալուց առաջ, այսինքը լաւութիւն անելու նպատակով իրան գոհելուց առաջ, նա պէտք է դադարի ատելուց՝ ուրիշի վնասելուց, և, լաւ սպրելու համար, դադարի մարդու մէկը միւսից դերադասելուց:

Միայն նա կարող է սիրել, — միշտ բաւարարութիւն տալով իրան և ուրիշներին, — ով չէ ընդունում անձնական բարօրութիւնը և աշխատում է օր առաջ ազատվել այդ կեղծ բարօրութիւնից և ամենքի հետ վարվում է մարդուն յատուկ բարեացակամութեամբ: Այդպիսի մարդու համար՝ սիրելու մէջ գտած բարիքն ու բոյսի բարիքը, որ նա գտնում է լոյսի մէջ՝ մի և

նոյնն է, ու, այս պատճառով, ինչպէս ոչ ծի բանի տակ չժածկված բոցս չի կարող հարցնել ու չէ հարցնում, թէ որ կողմն անի, լսւ է արդեօք իր վայելքս լոյսը, չսպասի՞ ուրիշ լուսադոյն լոյսի, և բնդունում է աշխարհի միակ լոյսը ու ձգվում նրա կողմը,— այնպէս էլ անձնական վայելքներին հրաժարված մարդը չէ՛ մտածում, քննում, թէ ուրիշներից խլածից որ մասը և սիրած էականներից որին սա, ու չիս արդեօք իրանից պահանջվող սիրուց աւելի լաւը,—այլ իրան, իր ողջ կեանքը տալիս է այն սիրուն, որ մասջելի է իրան ու հէնց իր աչքի առջևն է: Միայն այսպիսի սէրն է տալիս կատարեալ բաւականութիւն:

Իր հողին իր բարեկամների համար տալուց աւել՝ ուրիշ ի՞նչ սէր կարող է լինել աշխարհումս: Սէրը միայն այն ժամանակն է սէր, երբ մարդ իրան է զոհ բերում: Երբ մարդ տալիս է ուրիշին ոչ միայն իր ժամանակը, իր ուժերը, այլ և երբ սպառում է իր մարմինը՝ սիրած առարկայի համար, երբ տալիս է իր կեանքը,—միայն այս ենք ամենքս սէր համարում և միայն այսպիսի սիրու մէջ ենք զանում մեր բարօրութիւնը, որ սիրու պարզէն է: Աշխարհն էլ է միայն նրանով կոտավարվում, որ կ'ս մարդկանց միջև այսպիսի սէր: Ծիծ ավող մայրը ուղղակի իրան, իր մարմինն է կերակուր տալիս երեխաներին, որոնք, առանց զրան չպէտք է կարողանան ապրել: Այս էլ սէր է: Հէնց այսպէս էլ ամէն մշակ իրան, իր մարմինը կերա-

կուր է տալիս, որպէսզի ուրիշները լսւ ապրեն, կեանքը մաշում է աշխատանքի մէջ և մահվան դուռը դցում իրան: Ու այսպիսի սէր կարող է ունենայ նա, ով ոչինչ արդելը չէ տեսնում՝ իր սիրած էականների համար, իր անձը զոհ բերելու մէջ: Իր երեխան ստրնատուի ավող մայրը՝ սիրել չի կարող. իր համար փող ձեռք բերող ու պինդ պահող մարդը՝ չի կարող սիրել:

Սէրը՝ ինքը կեանքն է, բաց ոչ թէ անբան, տանջվող ու մեռնող, այլ երանական ու անվախճան կեանքը: Ամենքս այս շատ լաւ գիտենք: Սէրը խելքի եղբակացութիւնն է, յայտնի գործի հեռեանք չէ. այլ կեանքի ուրախ գործն է, որ ամէն կողմից շրջապատում է մեզ, որին ամենքս էլ ճանաչում ենք մանկութեան ամենաթարմ յուշիկներից մինչև այն ժամանակը, երբ աշխարհի կեղծ վարդապետութիւնները նրան դեռ չեն լինում ապականած մեր հողում ու մեզ չեն լինում զրկած՝ նրան մեր մէջ զգալու հնարաւորութիւնից:

Սէրը՝ մարդու անձնական, ժամանակաւոր վայելքներն աւելացնող մի ձգտում չէ, ինչպէս ընտրովի անձերի կամ առարկաների սէրը, այլ մարդուց դուրս եղած վայելքների ձգտումը, որ մնում է նրանում այն ժամանակ, երբ նա հրաժարվում է անասնական վայելքներից:

Կենդանի մարդկանցից ով չգիտէ, ով իր կեանքում, զոնէ մէկ անգամ, այն էլ մեծ մասամբ մանկա-

կան տարիներու՝ — Երբ հողին դեռ ապականված չէ լինու՞մ այն կեղծ ու սրտախր բաներով, որոնք ոչնչացնու՞մ են կեանքը, — չէ զգացել այն երանական զգացու՞մը, որով առգորված ժամանակ, մարդ ուզու՞մ է սիրել ամենքին՝ թէ մերձաւորներին, թէ հօրն ու մօրը, թէ եղբայրներին, թէ չարերին, թէ թշնամիներին, թէ շունը, թէ ձին, թէ խոտը. երբ միայն մի բան է ուզու՞մ, — որ ամենքը լաւ լինեն, ամենքը երջանիկ լինեն, ու աւելի այն է ուզու՞մ, որ մարդ ինքն 'անի այնպէս, որ ամենքը լաւ լինեն, որ անձնատուր լինի, սա իր ամբողջ կեանքը, որպէս զի ամենքը միշտ լաւ և ուրախ լինեն: Ահա այս է, ու հէնց միայն այս է այն սերը, որ խկապէս մարդու կեանքն ու կենդանութիւնն է:

Թարգմանեց

ԷՄՄ. ՔԱԼ. ՆԱԶԱՐԵԱՆՅ.



Արմ.
2-3818a

481
502

Գ Ի Ե Ն Է 8 Կ Ո Պ.

Ն Ո Յ Ն Հ Ե Ղ Կ Ն Ա Կ Ի

- 1. Աղօլոր՝ 5 կոպ.
- Բժշկ. Պրոֆ. Բուրճեղյանի, ԱՌԻՈՂՋԱՊԱՀԻԿ ԿԱ-
 ՆՈՆՆԵՐԻ ԲՈՂՈՐ ԵՎ ՍՈՍԸՆԱՐԱՆՆԵՐԻ Ա-
 ՂԱԿԵՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՂԱԿԵՐԱՍՈՆԻՆՆԵՐԻ ԿԱ-
 ՄԱՐ 7 կոպ.



<< Ազգային գրադարան



NL0146208

